ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/145/2024

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 30 հուլիսի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2024 թվականի հուլիսի 30-ին քննելով ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ 2024 թվականի հուլիսի 10-ի թիվ ՎԻՎ/145/24 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված գործառույթների իրականացման շրջանակներում հիմք ընդունելով «Hetq.am» լրատվականի՝ «Արտաշատի ավագանու անդամի ընկերությունը՝ նույն համայնքի սուբվենցիոն ծրագրերի հաղթող» վերտառությամբ

հրապարակումը[1] և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244.17-րդ հոդվածի 1-ին մասերով, իրականացրել է հրապարակմամբ ներկայացված տեղեկատվության հիման վրա վեր հանված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանի կողմից դրսևորված առերևույթ խախտմանն առնչվող նյութերի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզել է.

1.2 ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Սամվելի Մկրտչյանի հետ քաղաքական հարաբերություններով կապված անձ (Արտաշատ համայնքի ավագանու անդամ)՝ «Գարանտ Կապիտալ Ստրոյ» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր և տնօրեն հանդիսացող Նարեկ Բաղդասարյանի հետ իրականացված գնման գործընթացի արդյունքում 2023 թվականի նոյեմբերի 7-ին թիվ ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-23/78 կապալային աշխատանքների կատարման պայմանագրի կնքմամբ Կառլեն Մկրտչյանն իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն (անգործություն), որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ մասին «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով, այդ կերպ թույլ տալով «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի առերևույթ խախտում:

1.3 Հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 10-ի թիվ ՎԻՎ/145/24 որոշմամբ վերոնշյալ առերևույթ խախտման հիմքով հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

1.4 Հանձնաժողովը 2024 թվականի հուլիսի 10-ին Կառլեն Սամվելի Մկրտչյանին հասցեագրել է թիվ 01/2114-2024 ծանուցումը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով վարույթի մասնակցի կողմից դրսևորած առերևույթ վարչական իրավախախտման վերաբերյալ՝ հրավիրելով ծանուցումը ստանալուն հաջորդող երրորդ օրը, ժամը՝ 15:30-ին

[1] https://hetq.am/hy/article/166474

վերջինիս ներկայությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու, իսկ յոթերորդ օրը, ժամը՝ 15:30-ին նշված առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա իրականացվող գործի քննությանը մասնակցելու:

1.5 2024 թվականի հուլիսի 17-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-3238-2024 գրությամբ Կառլեն Մկրտչյանը ներկայացրել է միջնորդություն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման օրը տեղափոխելու և հուլիսի 18-ին նշանակելու վերաբերյալ, որին ի պատասխան, Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հուլիսի 17-ի թիվ 01/2177-2024 գրությամբ Կառլեն Մկրտչյանը ծանուցվել է միջնորդության բավարարման վերաբերյալ և հրավիրվել սույն թվականի հուլիսի 18-ին, ժամը՝ 16:30-ին նշանակված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը:

1.6 2024 թվականի հուլիսի 18-ին պատշաճ ծանուցված Կառլեն Մկրտչյանի ներկայացուցչի մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/340/24 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով, միաժամանակ արձանագրության կազմման ժամանակ վարույթի մասնակցի ներկայացուցչի կողմից ներկայացվել է գրավոր առարկություն (այսուհետ՝ նաև Առարկություն):

1.7 2024 թվականի հուլիսի 19-ին Հանձնաժողով մուտքագրված թիվ Մ-3269-2024 գրությամբ վարույթի մասնակցի ներկայացուցիչը ներկայացրել է միջնորդություն՝ գործի քննությունը հետաձգելու՝ սույն թվականի հուլիսի 30-ին նշանակելու վերաբերյալ, որին ի պատասխան Հանձնաժողովը 2024 թվականի հուլիսի 23-ի թիվ 01/2220-2024 գրությամբ բավարարել է վերջինիս միջնորդությունը և վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/145/24 գործի քննությունը նշանակել է 2024 թվականի հուլիսի 30-ին, ժամը՝ 10:00-ին, ինչի կապակցությամբ վարույթի մասնակիցը պատշաճ ծանուցվել է:

1.8 2024 թվականի հուլիսի 30-ին, ժամը՝ 10:00-ին վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/145/2024 գործի քննությունն իրականացվել է պատշաճ ծանուցված վարույթի մասնակցի ներկայացուցչի մասնակցությամբ:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Արձանագրված առերևույթ իրավախախտման առնչությամբ 2024 թվականի հուլիսի 18-ին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ Կառլեն Սամվելի Մկրտչյանի ներկայացուցչի (լիազորագիր՝ տրված 17.07.2024թ.) (այսուհետ՝ Ներկայացուցիչ) կողմից ներկայացվել է Առարկություն, որով ներկայացվում է հետևյալը.

«Ս/թ հուլիսի 17-ին ծանուցվել եմ, որ իմ նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ ՎԻՎՕ 169.31-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ կապված «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի խախտման հետ:

Սույնով առարկում եմ հարուցված վարչական վարույթի դեմ՝ հետևյալ հիմնավորմամբ.

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝ Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

Համաձայն նույն հոդվածի 5-րդ մասի՝ Եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը (անգործությունը) կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է 10-օրյա ժամկետում իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին, որը ենթակա է քննարկման անհապաղ:

Տվյալ դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը /այսուհետ՝ Հանձնաժողով/ իր 10.07.2024 թ. որոշման մեջ նշել է, որ «Կառլեն Մկրտչյանն իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն, որն առերույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման…», մինչդեռ Հանձնաժողովի կողմից հաշվի չեն առնվել հետևյալ իրավական հանգամանքները.

Համաձայն «Գնումների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն

չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք»:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017 թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 4-րդ կետի՝ Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Ստացվում է, որ պատվիրատուի ղեկավարի՝ համայնքի ղեկավարի կողմից ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի հաստատումն իմպերատիվ պահանջ է, որը խախտելը պատվիրատուի համար կարող է հանգեցնել բացասական իրավական հետևանքների:

Հարկ է նշել, որ Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Այսինքն համայնքի ղեկավարը գնումների այս գործընթացին առնչվում է միայն 3-րդ՝ պայմանագրի հաստատման փուլում, իսկ մինչև այդ ողջ գործընթացը կարգավորվում է գնումների մասին օրենսդրությամբ, մասնավորապես, համաձայն Կարգի 8-րդ կետի՝ Գնումները համակարգողը՝

1) պատասխանատու է պատվիրատուի՝ գնումների գործընթացի կազմակերպման և համակարգման համար.

2) եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին.

3) իրականացնում է գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները.

4) կազմում և պատվիրատուի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում տվյալ գնման ընթացակարգի արձանագրությունը և պայմանագիրը:

Համաձայն Կարգի 11-րդ կետի՝ Պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը.

2) հետևում է պայմանագրի կողմի (կապալառու, մատակարար և այլն)՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացին և դրա արդյունքներով պատվիրատուի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ.

3) ընդունում է պայմանագրի կատարման արդյունքը.

4) ներկայացնում է այն անձի (անձանց) թեկնածությունը, որն առաջադրվում է գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով.

5) անհրաժեշտության դեպքում առաջարկ է ներկայացնում գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Եթե էլեկտրոնային աճուրդի ձևով կազմակերպված գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով, ապա տվյալ գնումը կարող է կատարվել գնման այլ ընթացակարգով՝ հաշվի առնելով տվյալ գնման ձևի կիրառման համար սահմանված պահանջները:

Ստացվում է, որ տվյալ դեպքում համայնքի ղեկավարի գործողությունը՝ պայմանագրի հաստատումը, չի ազդել և չէր կարող ազդել իր պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

Համաձայն ՎԻՎՕ 279-րդ հոդվածի՝ Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է, արդյոք,

վարչական իրավախախտում. արդյոք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ. արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության. կան, արդյոք, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ. պատճառվել է, արդյոք, գույքային վնաս, հիմքեր կան, արդյոք, վարչական իրավախախտման վերաբերյալ նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության, աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու համար, ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Սույն գործում գտնում ենք, որ Հանձնաժողովը պարտավոր է պարզել, թե արդյո՞ք համայնքի ղեկավարը մեղավոր է այդ գործողությունը կատարելու մեջ, արդյո՞ք կան պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ և այլն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում եմ հաշվի առնել նշածս փաստական և իրավական հանգամանքները և վարչական վարույթը կարճել:»:

Միևնույն ժամանակ, գործի քննության ընթացքում վարույթի մասնակցի ներկայացուցիչը պնդել է Առարկությունը, միաժամանակ վերջինիս կողմից անդրադարձ է կատարվել Առարկության համատեքստում վերաբերելի օրենսդրական իրավակարգավորումների մեկնաբանմանը:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/145/24 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Հայտարարագրերի ռեեստրի տվյալների համաձայն՝ Կառլեն Սամվելի Մկրտչյանը ստանձնել է Արտաշատ համայնքի ղեկավարի պաշտոնը 2021 թվականի դեկտեմբերի 12-ին:

3.2 Արտաշատի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում (https://www.artashat.am/Pages/DocFlow/Default.aspx?dt=mer) հրապարակված տվյալների

համաձայն՝ Կառլեն Սամվելի Մկրտչյանը մինչ օրս զբաղեցնում է Արտաշատ համայնքի ղեկավարի պաշտոնը:

3.3 Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայացած Արտաշատ համայնքի ավագանու ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում՝ որպես Արտաշատ համայնքի ավագանու անդամի թեկնածու ընդգրկված Կառլեն Սամվելի Մկրտչյանը ընտրությունների արդյունքների հիման վրա Արտաշատի համայնքի ավագանու անդամի լիազորությունները ստանձնել է 2021 թվականի դեկտեմբերի 16-ին:

3.4 Կառլեն Մկրտչյանի կողմից 2024 թվականի մարտի 27-ին ներկայացված «Պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի» տարեկան հայտարարագրի «Ե.5. Հայտարարատուի անդամակցությունը կուսակցություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում ներկայացված տվյալների համաձայն՝ Կառլեն Մկրտչյանը հանդիսանում է «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցության անդամ՝ զբաղեցնելով ՔՊԿ Արտաշատի տարածքային խորհրդի նախագահի պաշտոնը:

3.5 Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայացած Արտաշատ համայնքի ավագանու ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում՝ որպես Արտաշատ համայնքի ավագանու անդամի թեկնածու ընդգրկված Նարեկ Բաղդասարյանը ընտրությունների արդյունքների հիման վրա Արտաշատ համայնքի ավագանու անդամի լիազորությունները ստանձնել է 2022 թվականի մարտի 17-ին:

3.6 Արտաշատի համայնքապետարանի պաշտոնական կայքէջում (https://www.artashat.am/Pages/DocFlow/Default.aspx?dt=mer) հրապարակված տվյալների համաձայն՝ Նարեկ Բաղդասարյանը մինչ օրս զբաղեցնում է Արտաշատ համայնքի ավագանու անդամի պաշտոնը:

3.7 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝

Կառլեն Սամվելի Մկրտչյանի հետ քաղաքական հարաբերություններով կապված անձ Նարեկ Բաղդասարյանը 2020 թվականի փետրվարի 3-ից հանդիսանում է «Գարանտ Կապիտալ Ստրոյ» ՍՊ Ընկերության (ՀՎՀՀ՝04235144) (այսուհետ նաև՝ Ընկերություն) 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր և տնօրեն:

3.8 Գնումների armeps համակարգում կցված պայմանագրի բացակայությամբ պայմանավորված՝ Հանձնաժողովի հարցմանն ի պատասխան՝ Արտաշատի համայնքապետարանի կողմից ներկայացված պայմանագրի համաձայն՝ իրականացված գնման գործընթացի արդյունքում «Գարանտ Կապիտալ Ստրոյ» ՍՊԸ-ի հետ 2023 թվականի նոյեմբերի 7-ին թիվ ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-23/78 ծածկագրով կնքված պայմանագիրը ստորագրված է Արտաշատի համայնքապետարանի անունից՝ որպես պատվիրատուի ղեկավար հանդես եկող համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանի կողմից:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է հանրային իշխանության մարմինների վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա: Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային: Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորման համաձայն՝ համայնքի ղեկավարի պաշտոնը հանդիսանում է **համայնքային քաղաքական պաշտոն**:

4.2 Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

4.3 Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին,

որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ: Գործարար հարաբերությունները ներառում են տնտեսական, տնտեսավարման կամ գործարքներից ծագող ցանկացած հարաբերություններ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել օգուտների ստացման այդ հարաբերությունների մասնակիցների կամ նրանցից որևէ մեկի համար: **Քաղաքական հարաբերությունները ներառում են որևէ կուսակցության մասնակցության կամ տվյալ կուսակցության այլ անդամների հետ** ունեցած գործարար **կամ այլ գործնական** կամ անձնական կապի ուժով ծագող հարաբերությունները:

4.4 Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման իրավիճակի առաջացումից**, **ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց** կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին (փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում, որոշման վրա ազդեցություն ունեցող հանձնախմբերի ձևավորում և այլն) մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց:

4.5 Նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը (անգործությունը) կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, **ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է 10-օրյա ժամկետում** իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին ներկայացնել գրավոր հայտարարություն **շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին**, որը ենթակա է քննարկման անհապաղ:

4.6 Նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ **քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում պարտավոր է այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով**, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ:

4.7 Նույն հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը կամ **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությունն ստանալն անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց** կամ որոշում կայացնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ՝ այդ մասին տեղեկացնելով վարույթի մասնակիցներին, իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադաս կամ անմիջական ղեկավար չունենալու դեպքում՝ **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:**

4.8 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված է գնումների գործընթացի կազմակերպման կարգը (**այսուհետ՝ Կարգ**), որի 4-րդ կետով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ 1) գնումների պլանավորում, 2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը), 3) **պայմանագրի կնքում**, 4) պայմանագրի կատարում և կառավարում, Կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ պատվիրատուի ղեկավարը՝ **տեղական ինքնակառավարման մարմիններում՝ համայնքի ղեկավարն է կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձն է**, Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ **պատվիրատուի ղեկավարը**, ի թիվս այլ գործառույթների, **կնքում է պայմանագիրը**:

4.9 «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց

տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և **շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը**:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.12 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.13 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.14 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.31-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.15 Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ **քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելը**՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

4.16 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

«Հանրային ծառայության մասին» օրենքով կարգավորվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից նույն օրենքով սահմանված դեպքերում շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն ներկայացնելուն առնչվող իրավահարաբերությունները:

Սույն գործով ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Մկրտչյանը Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, ուստի, վերջինիս նկատմամբ կիրառելի են Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված շահերի բախմանը վերաբերող իրավակարգավորումները:

Սույն գործում առկա փաստական տվյալների համաձայն՝ Կառլեն Մկրտչյանը, որպես պատվիրատուի ղեկավար (Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավար) իր լիազորությունների շրջանակում համայնքի կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պայմանագիր է կնքել Օրենքի իմաստով իր հետ քաղաքական հարաբերություններով կապված անձի (Արտաշատ համայնքի ավագանու անդամ)՝ Նարեկ Բաղդասարյանի բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպության՝ «Գարանտ Կապիտալ Ստրոյ» ՍՊԸ-ի հետ:

Սույն գործում առկա փաստական տվյալների և վերոնշյալ օրենսդրական կարգավորումների համատեքստում Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն պարագայում Կառլեն Մկրտչյանի և Նարեկ Բաղդասարյանի քաղաքական հարաբերությունները դրսևորվում են նույն կուսակցության անդամ լինելու և նույն համայնքում համապատասխանաբար համայնքի ղեկավար և համայնքի ավագանու անդամի

պաշտոններ զբաղեցնելու հանգամանքով և պայմանավորված են վերջիններիս ունեցած այլ գործնական կապի ուժով ծագող հարաբերություններով:

Հանձնաժողովն ուսումնասիրել է վարույթի մասնակցի՝ Առարկությամբ ներկայացրած դիրքորոշումն առ այն, որ տվյալ դեպքում իրականացված գնման գործընթացում համայնքի ղեկավարի գործողությունը՝ պայմանագրի հաստատումը, չի ազդել և չէր կարող ազդել իր պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա, և վերոնշյալի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է «շահերի բախման իրավիճակի» հասկացությունը, որի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթով բացահայտված են «Պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահի» բովանդակային սահմանները:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Տվյալ դեպքում, վերոնշյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ Օրենքով սահմանված իմպերատիվ պահանջներն ապահովում են պաշտոնատար անձի մասնավոր շահի ինչպես հնարավոր, այնպես էլ փաստացի ազդեցության չեզոքացումը վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա, որը կարող է դրսևորվել ինչպես որոշում կայացնելու, այնպես էլ գործողություն կատարելու արարքներում:

Այսպես, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է

համայնքների ղեկավարների (...) կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված (...) շահերի բախման կարգավորումների (...) պահպանմանը հետևելը:

Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորումների վերլուծությունից բխում է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին հայտարարություն ներկայացնելու պարագայում անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց՝ բացառություն սահմանելով միայն այն դեպքերի համար, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ: Միաժամանակ, նույնիսկ այն պարագայում, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է վերոթվարկյալ հանգամանքներով, վերոնշյալի համատեքստում օրենսդիրը նախատեսում է իրավակարգավորում առ այն, որ վերոնշյալ դեպքում այդ մասին պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է տեղեկացնել վարույթի մասնակիցներին, իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադաս կամ անմիջական ղեկավար չունենալու դեպքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Վերլուծելով Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումները՝ պարզ է դառնում, որ նշված իրավակարգավորմամբ նախատեսվում է շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու պարտականություն, որը չկատարելու համար վարչական պատասխանատվություն է նախատեսված Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով: Նշված դրույթով սահմանված զանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվում է իրավասու մարմին հայտարարություն չներկայացնելու արարքով:

Հանձնաժողովի վերը նշված լիազորություններն իրացվում են ինչպես վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթների (Օրենսգրքի 169.31-րդ հոդվածով նախատեսված իրավախախտումների կապակցությամբ), այնպես էլ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով (27-33-րդ հոդվածներով սահմանված դրույթներ) նախատեսված համապատասխան վարույթների իրականացմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Վերոնշյալ օրենսդրական դրույթների բովանդակային սահմանների առնչությամբ անհրաժեշտ ենք համարում համեմատական վերլուծությամբ նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ կոնկրետ գործի հանգամանքներով պայմանավորված անհրաժեշտ է պարզել արդյո՞ք պաշտոնատար անձի վարքագծում (գործողություններում) առկա է շահերի բախման դեպք, թե այն բացակայում է, ապա նշված հարցի լուծումը հնարավոր է ապահովել օրենսդրորեն Հանձնաժողովին վերապահված առանձին տեսակի վարույթների իրականացմամբ, որպիսին հանդիսանում է բացառապես «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված համապատասխան վարույթը:

Այսպիսով, օրենսդիրը Հանձնաժողովին է վերապահել լիազորություն քննել և լուծել պաշտոնատար անձի վարքագծում (գործողություններում) շահերի բախման դեպքի առկայության կամ բացակայության հարցը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված վարույթի շրջանակում, որը հարուցվում է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված շահերի բախման դեպքի առնչությամբ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով սահմանված հիմքերով, իրականացվում է նույն օրենքով սահմանված ընթացակարգային առանձնահատկություններով և եզրափակվում է կոլեգիալ մարմնի կողմից եզրակացություն ընդունմամբ, որով հաստատված է համարվում պաշտոն զբաղեցնող անձի վարքագծում շահերի բախման դեպքի առկայության կամ բացակայության հարցը:

Իսկ բոլոր այն դեպքերում, երբ առկա է Օրենսգիքի 169.31-րդ հոդվածով նախատեսված առերևույթ իրավախախտումների դեպքեր, ապա Հանձնաժողովի կողմից գործը քննվում և լուծվում է Օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի շրջանակներում, արդյունքում կոլեգիալ մարմնի կողմից ընդունվում են վարչական պատասխանատվության միջոցի կիրառման (գործի վարույթի կարճման) վերաբերյալ որոշումներ, որով հաստատված է համարվում պաշտոնատար անձի վարքագծում (գործողությունում կամ անգործությունում) կոնկրետ զանցանքի դրսևորված

լինելը, այսինքն վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթում լուծվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված իմպերատիվ պահանջների խախտված լինել կամ չլինելու խնդիրները, որոնք օրենսդրորեն նպատակաուղղված են ապահովելու պաշտոնատար անձի մասնավոր շահի ինչպես հնարավոր, այնպես էլ փաստացի ազդեցության չեզոքացումը վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

Նշենք նաև, որ պաշտոնատար անձի մասնավոր շահի հնարավոր ազդեցության մասին անդրադարձ է կատարվել նաև միջազգային իրավական փաստաթղթերում:

Այսպես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից սահմանված «Հանրային ծառայողների վարքագծի կանոնագրքի» (այսուհետ՝ Վարքագծի կանոնագիրք) համաձայն՝ (R(2000)10 Հանձնարարական, ընդունված 106-րդ նստաշրջանի ընթացքում 2000 թվականի մայիսի 11-ին, Հոդված 13) շահերի բախումն առաջանում է բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձի մոտ առկա է անձնական այնպիսի շահ, որը կարող է ազդել կամ թվում է, թե կարող է ազդել պաշտոնատար անձի պաշտոնեական լիազորությունների անաչառ և օբյեկտիվ իրականացման վրա: Այս պարագայում անձնական շահը ենթադրում է առավելությունների կամ արտոնությունների ձևավորում իր անձի կամ իր ընտանիքի անդամների, մերձավոր ազգականների, ընկերների, անձանց կամ կազմակերպությունների համար, որոնց հետ պաշտոնատար անձն առնչություն ունի:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Հանրային ծառայությունում շահերի բախման իրավիճակների կառավարման մասին ուղեցույցում շահերի բախումը բնութագրում է հետևյալ կերպ՝ շահերի բախումն ընդգրկում է հանրային ծառայողի մոտ հանրային պարտականությունների և մասնավոր շահերի կոնֆլիկտը, որտեղ հանրային ծառայողն ունի մասնավոր շահ, որը կարող է անտեղի ազդեցություն ունենալ հանրային ծառայողի պաշտոնեական պարտականությունների իրագործման վրա: Եթե շահերի բախման իրավիճակները պատշաճորեն չնույնականացվեն և կառավարվեն, ապա դրանք կարող են լրջորեն վտանգել կազմակերպությունների բարեվարքությունը և հանգեցնել կոռուպցիայի ինչպես հանրային ոլորտում, այնպես էլ մասնավոր:

Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի «Շահերի բախումը տեղական և տարածքային մակարդակներում» հուշագրում սահմանվում են շահերի բախման քաղաքականության նպատակները և խնդիրները՝ նշելով, որ ընդհանուր առմամբ, շահերի բախման քաղաքականությունները չպետք է միայն լինեն շահերի բախման կանխարգելման գործիք: Դրանք պետք է նաև՝

- Մեծացնեն վստահությունը կառավարության նկատմամբ,
- Ցուցադրեն ընտրված ներկայացուցիչների և պաշտոնատար անձանց բարեվարքության բարձր մակարդակը,
- Կանխարգելեն շահերի բախման ի հայտ գալը, քանի որ պաշտոնական գործողությունները ենթակա կլինեն հանրային հսկողության,
- Պետական պաշտոնավարումից հետ պահեն այնպիսի անձանց, որոնց անձնական ֆինանսական միջոցները ենթակա չեն հանրային հսկողության,
- Հանրությանն ավելի մեծ հնարավորություն ընձեռեն պետական պաշտոնատար անձանց կատարողականի մասին դատելու՝ վերջինների արտաքին ֆինանսական շահերի լույսի ներքո:

Ոչ միայն Եվրոպայի Խորհրդի կողմից սահմանված Վարքագծի կանոնագիրքը, այլ նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) շահերի բախման հասկացության մեջ ընդգրկում են նաև հավանական և թվացյալ շահերի բախումը: Ըստ ՏՀԶԿ-ի մեկնաբանության՝ հավանական և թվացյալ շահերի բախումը ևս վտանգում է պաշտոնեական որոշումների անաչառության նկատմամբ հանրային վստահությունը: Պաշտոնատար անձինք որոշումների կայացման ժամանակ պետք է հաշվի առնեն նաև հանրային ընկալումները: ՏՀԶԿ-ն առաջարկում է, որ հավանական և թվացյալ շահերի բախման դեպքերը ևս պետք է բացառվեն, որպեսզի նվազեցվեն պաշտոնատար անձի համբավի առնչությամբ այն ռիսկերը, որոնք կարող են վնասել անձի/համակարգի բարեվարքությանը (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, Հանրային ծառայությունում շահերի բախման կառավարում, գործիքակազմ 1):

ՏՀԶԿ-ն շահերի բախումը սահմանում է որպես հակասություն պաշտոնատար անձի մասնավոր շահի և պաշտոնեական պարտականությունների միջև, որի պարագայում անձի մասնավոր շահը կարող է ոչ պատշաճ կերպով ազդել պաշտոնեական

պարտականությունների իրականացման վրա (ՏՀԶԿ Գործիքակազմ հանրային պետական ոլորտում շահերի բախման կառավարման վերաբերյալ, տե՛ս էջ 13):

Սույն վարույթի շրջանակներում գնումների armeps համակարգում առկա տվյալների ուսումնասիրմամբ պարզ է դառնում, որ քննարկվող գնման գործընթացին մասնակցելու միակ հայտ ներկայացնողը եղել է «Գարանտ Կապիտալ Ստրոյ» ՍՊԸ-ն: Վերոնշյալի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված հանգամանքը, սակայն, պաշտոնատար անձին չի ազատում գնման գործընթացի ինքնուրույն փուլ հանդիսացող պայմանագրի կնքման գործընթացում շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողովին գրավոր հայտարարություն ներկայացնելու պարտավորությունից, որով ապահովվում է պաշտոնատար անձի՝ շահերի բախման իրավիճակից զերծ մնալու օրենսդրի կողմից կանխորոշված նպատակը:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ իրականացված գնման գործընթացի շրջանակներում պատվիրատուի և Ընկերության միջև վկայակոչված պայմանագրի կնքումն արդեն իսկ վկայում է այն մասին, որ հայտարարված մրցույթում միակ հայտ ներկայացրած և համապատասխան ընթացակարգով հաղթող ճանաչվելու արդյունքում պայմանագրի կնքման պահին համայնքի ղեկավարին հայտնի է եղել կնքման ենթակա պայմանագրի կողմ հանդիսացող առևտրային կազմակերպության բաժնեմասնակցի իր հետ քաղաքական հարաբերություններով փոխկապակցվածության հանգամանքը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ որևէ ձևով դրսևորված փոխկապակցվածության հանգամանքի առկայությունն արդեն իսկ այն ազդակն է, որի պարագայում պաշտոնատար անձն, ում վերաբերելի են շահերի բախմանն առնչվող իրավակարգավորումները, մինչև որոշում ընդունելը կամ գործողություն կատարելը պարտավոր է շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողովին գրավոր հայտարարություն ներկայացնել:

Վկայակոչված հանգամանքով պայմանավորված՝ վարույթի մասնակիցը պարտավոր էր, իր պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա իր մասնավոր շահի ազդեցության չեզոքացում ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ձեռնպահ մնալ գործողություն կատարելուց, տվյալ պարագայում վկայակոչված

պայմանագրի կնքումից և Օրենքով սահմանված ժամկետում հայտարարություն ներկայացնել Հանձնաժողով: Մինչդեռ, վարույթի մասնակիցն օրենքով սահմանված ժամկետում ոչ միայն Հանձնաժողով չի ներկայացրել նշված հայտարարությունը, այլև, որպես պատվիրատուի ղեկավար, իր լիազորությունների շրջանակում, կատարել է գործողություն՝ կնքելով իր հետ քաղաքական հարաբերություններով կապված անձի բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպության հետ պայմանագիր:

Ինչ վերաբերում է վարույթի մասնակցի այն դիրքորոշմանը, որ պատվիրատուի ղեկավարի՝ համայնքի ղեկավարի կողմից ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի հաստատումն իմպերատիվ պահանջ է, որը խախտելը պատվիրատուի համար կարող է հանգեցնել բացասական իրավական հետևանքների, նշվածի կապակցությամբ անհրաժեշտ է ընդգծել, որ գնումների մասին օրենսդրությամբ (Կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված դրույթ) համայնքի ղեկավարին վերապահված է իրավասություն գնումների գործընթացում, այդ թվում՝ պայմանագրի կնքման փուլում նշանակելու լիազորված պաշտոնատար անձ՝ որպես տեղական ինքնակառավարման մարմնում պատվիրատուի ղեկավար: Վերոնշյալով պայմանավորված՝ պայմանագրի կնքումն օրենսդրությամբ սահմանված հիքերով հնարավոր է ապահովել այլ պաշտոնատար անձի կողմից: Նշված իրավական հնարավորությունը ևս ուղղված է շահերի բախման դեպքերի բացառմանը, որպիսի պարագայում չի կարող պայմանագրի կնքումը բնորոշվել որպես համայնքի ղեկավարի անվերապահ պարտականություն: Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրում է, որ նույնիսկ այն պարագայում, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը (պայմանագրի հաստատումը) պայմանավորված է եղել անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ, ապա պաշտոն զբաղեցնող անձը՝ համայնքի ղեկավարը վերոնշյալ պարագայում պայմանագիրը հաստատելուց և (կամ) կնքելուց այդ մասին պարտավոր էր տեղեկացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, որը, սույն գործով առկա փաստական տվյալների հաշվառմամբ, չի կատարվել:

Սույն գործով առկա փաստերի համադրման արդյունքում Հանձնաժողովն եզրահանգում է, որ Կառլեն Մկրտչյանի կողմից իր պաշտոնեական պարտականությունների

անաչառ և օբյեկտիվ կատարումն ապահովելու նպատակով չեն ձեռնարկվել օրենքով սահմանված համապատասխան գործողություններ շահերի բախման իրավիճակում չհայտնվելու կամ հնարավոր նման իրավիճակում հայտնվելու պարագայում օրենքով նախատեսված կանխարգելման ընթացակարգերով առաջնորդվելու ուղղությամբ:

Վերոշարադրյալի արդյունքում, սույն գործով վարույթի մասնակցի կողմից խախտվել է Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը՝ շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու առնչությամբ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը:

Հանձնաժողովը, անդրադառնալով վերոնշյալ իրավախախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցին, գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Վերոշարադրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Կառլեն Մկրտչյանի կողմից կատարված արարքը հանգեցնում է օրենքով պահպանվող շահերի՝ սույն դեպքում «Հանրային ծառայության մասին» օրենքով ամրագրված՝ շահերի բախմանը վերաբերելի իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը՝ հաշվի առնելով այն, որ նշված պայմանագրի կնքմամբ, պաշտոնատար անձը չի ներկայացրել գրավոր հայտարարություն Հանձնաժողովին, և, ըստ էության, ձեռնպահ չի մնացել գործողություն կատարելուց: Այսպիսով, ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Սամվելի Մկրտչյանի հետ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով քաղաքական հարաբերություններով կապված անձ Նարեկ Բաղդասարյանի (Արտաշատ համայնքի ավագանու անդամ) բաժնեմասնակցությամբ «Գարանտ Կապիտալ Ստրոյ» ՍՊԸ-ի հետ իրականացված գնման գործընթացի արդյունքում 2023 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԱՄԱՀ-

ԲՄԱՇՁԲ-23/78 պայմանագրի կնքմամբ Կառլեն Սամվելի Մկրտչյանն իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն, որն առերևույթ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում շահերի առկայության մասին գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով՝ խախտելով օրենքով սահմանված շահերի բախմանը վերաբերելի իրավակարգավորումների պահանջը:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի ղեկավար Կառլեն Սամվելի Մկրտչյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ **300 000** (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կառլեն Մկրտչյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ